

**ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ
ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ**

Հրամայական եղանակի բայերը ձևային առումով կայուն են: Գրաբարում նրանք համդես են եկել համադրական (բուն և հորդորական) և վերլուծական (արգելական հրամայական, որ մշտապես ուղեկցվում է «մի» ձևությամբ) կառույցներով՝ ձևավորվելով ներկայի (արգելական հրամայական) և անցյալ կատարյալի հիմքերից (բուն և հորդորական հրամայականներ):

Հրամայական եղանակի դիմային վերջավորություններն ունեն հնդեվրոպական ծագում¹:

Իմաստագործառական առումով նրանք որոշակի հետաքրքրություն են ներկայացնում «Աստվածաշունչ» մատյանում, մասնավորապես Նոր Կտակարանի գրքերում: Մեր նպատակն է կատարել հին հայերենի հրամայական եղանակի բայաձևերի քննություն բովանդակության պլանում՝ բացահայտելով նրանց լեզվաոճական առանձնահատկությունները, փորձելով արժեքավորել նրանց դերը աստվածաբանական գրականության մեջ:

Ա. Արգելական հրամայականի գործառնությունը: Սրանք ժխտական խոնարհման կառույցներ են: Նոր Կտակարանում նրանց միջոցով պատվիրանի, հրամանի, հորդորի և խնդրանքի ձևով ժխտվում է այս կամ այն գործողությունը, թելադրվում այս կամ այն արգելքը: Նոր Կտակարանի առաջին երեք Ավետարանները՝ զրված Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի կողմից, աստվածաբանության մեջ կոչվում են «համատես»², այսինքն՝ Ավետարանիչները անդրադարձել են Հիսուս Քրիստոսի՝ Մարդ-Աստծո մարմնական գործունեությանը:

Մատթեոսի Ավետարանում գործածված է արգելական հրամայականի 26 բայաձև, Ղուկասի Ավետարանում՝ 24 բայաձև, Մարկոսի Ավետարանում՝ 10 բայաձև:

Աստվածաբանները Մատթեոսի Ավետարանի յուրահատկություններից մեկն են համարում նյութի համախմբումն ըստ դասակարգման, օրինակ՝

Հիսուսի ճառերը և խոսքերը, հրաշքների համախմբումը: Իրոք, բացահայտ են Մատթեոսի ուսուցողական-առաքելական նպատակները³: Ավետարանում տիրապետող են պատվիրան-հորդոր արտահայտող կառույցները: Օրինակ՝ «Մի՛ դատիժ՝ զի մի՛ դատիցիք» [Մատթ., Է, 1]: «Մի՛ գանձե՛ք ձեզ գանձս յերկրի, ուր ցեց եւ ուտիճ ապականեն» [Մատթ., Զ, 19]: «Որում խնդրէ ի քէն՝ տուր, եւ որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս»: [Մատթ., Ե, 42]:

Նոր Կտակարանի մյուս գիրքը Մարկոսի Ավետարանն է, որ համարվում է հնագույնն Ավետարանների մեջ: Եթե Մատթեոսի և Ղուկասի Ավետարաններն աչքի են ընկնում իրենց ուսուցողական-առաքելական ուղղվածությամբ, ապա Մարկոսի Ավետարանում Հիսուսի վարդապետությունը ներկայացվելուց բացի, առավելապես վեր է հանված նրա դերը, այսինքն՝ Աստծու Որդու՝ Մեսիայի հրաշագործական իշխանությունը⁴: Մարկոսի Ավետարանը ծավալով ամենափոքրն է և գրված է կենդանի լեզվով: «... Եւ ասէ, թո՛յլ տուք մանկտուրդ գալ առ իս, եւ մի՛ արգելուք զդոսս, զի այդպիսեացո՛ւ է արքայութիւն Աստուծոյ»: [Մարկ., Ժ, 14]:

Նոր Կտակարանի Գ Ավետարանը գրել է Ղուկասը⁵: Նրա գրչին է պատկանում նաև «Գործք Առաքելոցը»՝ Նոր Կտակարանի ընդարձակ գրքերից մեկը: Ղուկասի գործերը լեզվի տեսակետից պատկանում են Նոր Կտակարանի լավագույն երկերի թվին: Նա, լինելով մասնագիտությամբ բժիշկ, իր անձնական աստվածաբանական և արտահայտչական կնիքն է թողել երկերի վրա: Երկու գրքերում էլ արգելական հրամայականով բայաձևերը հիմնականում արտահայտում են հորդորներ: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ «Գործքը» ծավալով չի զիջում Ավետարանին, սակայն այնտեղ արգելական հրամայականի հատուկ նշտ բայաձևեր են միայն կիրառված, ընդամենը 5 օրինակ, որոնք արտահայտում են խնդրանք, հորդոր: Օրինակ՝ «... Եւ ասէր, մի՛ խռովիք, քանզի հոգի սորա ի սմին է» [Գ., Ի 10]:

Նոր Կտակարանի Դ Ավետարանը գրել է Հովհաննեսը: Նա գրել է նաև ընդհանրական նամակներ, որոնք ընդգրկված են «Թուղթք» գրքում և «Յայտնութիւն»-ը, որը Նոր Կտակարանի վերջին գիրքն է: Հովհաննեսի Ավետարանը կոչվում է «ոգեկան», որովհետև ավելի բարձր է և ոգեկան մթնոլորտ ունի⁶: Հովհաննեսը առաքյալներից ամենասիրելին էր: Նրա Ավետարանը ևս

առանձնանում է իր լեզվաոճական առանձնահատկություններով: Այստեղ գործածված է արգելական հրամայականի 9 բայածև, որոնք նույնպես հիմնականում արտահայտում են պատվիրան, հորդոր. «Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարեք» [Յով., է 24]: Սովորաբար ժխտվող պատվիրաններին հաջորդում է հակադիր պատվիրանը կամ հորդորը՝ արտահայտված բուն հրամայականով: «Յայտնութիւն»-ում գործածված է արգելական հրամայականի 9 բայածև. «Մի՛ անկանիր առաջի իմ եւ երկիր պագաներ...» [Յայտ., ԻԲ, 9]:

Պողոս առաքյալի նամակներում, ինչպես նաև ընդհանրական նամակներում գործածված են արգելական հրամայականի 51 բայածևեր, որոնք հիմնականում արտահայտում են պատվիրան-հորդորներ. «Մի՛ բամբասեք զմիմեանս. եղբայրք» [Թ, Յակ., Կաթ, Դ. 11]:

Իբրև ամփոփում ասենք, որ չորս Ավետարանիչներն էլ օգտվել են նույն աղբյուրներից: «Մարմնական» Ավետարաններում արգելական հրամայականի բայածևերն ավելի հաճախադեպ են, քան «ոգեկան» Ավետարանում: Թեպետ Ավետարանիչները տալիս են նույն պատվիրաններն ու հորդորները, առաջադրում նույն արգելքները, սակայն յուրաքանչյուր Ավետարանիչ ավանդության ընդհանուր նյութի կամ գրավոր աղբյուրի վրա դրել է իր անձնական լեզվաարտահայտչական և աստվածաբանական կնիքը:

Բ. Բուն հրամայականի քայածևերի զտոճառությունը: Գրաբարի բուն հրամայականի բայածևերը իմաստով համապատասխանում են արդի հայերենի նույն հրամայականին: Նրանք ձևավորում են հրամայական նախադասություններ: Նոր Կտակարանում բուն հրամայականի բայածևերն արտահայտում են պատվիրան, հրաման, հանձնարարական, խնդրանք, զգուշացումներ, թելադրանք: Օրինակ՝

ա) ապատվիրան. «Խնդրեցէ՛ք, եւ տացի ձեզ, հայցեցէ՛ք, եւ գտցիք, բախեցէ՛ք եւ բացցի ձեզ»: [Մատթ., է 7]

բ) հրաման. «Երթ յետս իմ, սատանայ, զի գրեալ է՝ Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես»: [Մատթ., Դ 10]

գ) խնդրանք. «Եւ վաղվադակի աղաղակեաց հայր մանկանն եւ ասէ. հաւատամ, օգնեա՛ անհաւատութեան իմում»: [Մարկ., Թ 23]

դ) հանձնառառական. «Վաճառեցէք զինչս ձեր եւ տուք ողորմութիւն. եւ արարէ՛ք ձեզ քսակ առանց հնանալոյ, զանձ անպակաս յերկինս»: [Ղուկ., ԺԲ 33]

ե) թելառոտանք. «Եւ ասէ ցնոսա. եկայք, երթիցուք եւ յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի եւ անդ քարոզեցից, զի յայս իսկ եկեալ եմ»: [Մարկ., Ա 38]

զ) զգուշացում. «Զգո՛յշ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա...»: [Մատթ., Զ 1]

«Մարմնական» Ավետարաններում կան զգուշացումներ ազահիւթյունից, շվայտութիւնից, կեղծ դպիրներից, սխալ ողորմութիւնից: «Ոգեկան» Ավետարանում զգուշացում արտահայտող ոչ մի կիրառություն չկա, չենք գտնում «զգոյշ լեր, զգոյշ լերուք, զգոյշ եղերուք» հրամայականներով սկսվող ոչ մի օրինակ:

Մատթեոսի Ավետարանում գործածվել է բուն հրամայականի 190 բայածև, Մարկոսի Ավետարանում՝ 95 բայածև, Հովհաննեսի Ավետարանում՝ 85 բայածև, Ղուկասի Ավետարանում՝ 151 բայածև, «Գործք»-ում գործածված է բուն հրամայականի 87 բայածև:

«Գործք»-ում հաճախադեպ են զգուշացում, բժշկում, հանձնարարական, ինչպէս նաև հրաման արտահայտող բայածևներ: Օրինակ՝ «Եւ եղեւ ծայն առ նա, արի՛, Պետրո՛ս, զեն եւ կեր»: [Գ., Ժ 13]: «Զգո՛յշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն» [Գ., Թ 40]: Ղուկասը իր երկու գրքերում էլ քանացել է հնարավորին չափ ճշգրիտ ներկայացնել դեպքերը: Նա հաճախ է ներկայացնում Հիսուսին առանձնակի աղոթելիս, օրինակ՝ «Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առ աշակերտն... եւ ասէ ցնոսա. «Զի՞՝ ննջէք, արիք, կացէ՛ք յաղօթս, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն»: Նոր Կտակարանի վերջին գրքում «Յայտնութիւն»-ում, գործածվել է բուն հրամայականի 49 բայածև:

Հովհաննեսի «Յայտնութեան» բովանդակութիւնը այն Հայտնութիւնն է, որ ստացել է Հովհաննեսը Հիսուս Քրիստոսից Պատմոս կղզում՝ գրի առնելու և Փոքր Ասիայի յոթ եկեղեցիներին ուղարկելու հանձնարարությամբ⁷: Այստեղ հանդիպում ենք «գրեմ» բայով ուղեկցվող կառույցների: Աստծուց Հովհաննեսը հրաման է ստանում գրելու, ինչ որ տեսնելու է, ինչ կա, ինչ

այսուհետև սահմանված է, որ լինի: Օրինակ՝ «Գրեա՛ գոր տեսանես, որ էն եւ որ յապա եւ հանդերծեալ է լինել այս» [Յայտ., Ա 19]: «Յայտնութիւն»-ում գործածված է այսպիսի 9 նախադասություն:

Ավետարանի ծավալուն, հետաքրքիր գրքերից են Պողոս առաքյալի նամակները, ինչպես նաև մյուս առաքյալների ընդհանրական նամակները: Սրանք աստվածաբանական լուրջ աշխատություններ են և իբրև նամակներ ունեն ժանրային առանձնահատկություններ: Սովորաբար առաքյալը թելադրում է իր նամակները և վերջում ավելացնում ողջույններ՝ նամակի վավերականությունը հաստատելու համար [Յոհն., ԺԶ 22, Ա Կորնթ., ԺԶ 21, Գաղ., Զ 11, Կող., Դ 18, ԲԹես., Գ 17, Փիլիմ., 19]՝

Առանձնացնել որևէ շարահյուսական կաղապար, ուր հրամայականի բայածևը այս կամ այն իմաստը պետք է արտահայտի, չենք կարող:

Պայմանահետևանքային իմաստ արտահայտող բարդ նախադասություններում առաջադրվող պայմանին հաջորդող հետևանք արտահայտող նախադասության բայ- ստորոգյալը կարող է դրվել բուն հրամայականի բայածևով, եթե արտահայտում է այդ բայածևին բնորոշ վերը քննված իմաստները. օրինակ՝ «Եթէ մեղիցէ եղբայր քո, սաստեա մա. եւ եթէ ապաշխարիցէ, թո՛ղ մա» [Ղուկ., ԺԷ, 3]: «Եթէ զայդ գործես, յայտնեա՛ զանձն քո աշխարհի» [Յ., Է 4]: (Ի դեպ, սա Հովհաննեսի Ավետարանի միակ օրինակն է): Նրանք ավելի շատ հանդիպում են Մատթեոսի Ավետարանում. «Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ, հա՛տ զնա և ընկեա՛ ի քէն» [Մատթ., Ե 30]:

Պայմանահետևանքային իմաստ արտահայտող կառույցների մեծ մասում պայմանի պարագա երկրորդական նախադասությունը սկսվում է «եթէ» շաղկապով: Ունենք 2 նախադասություն՝ «որ» շաղկապով սկսվող. «Եւ որ կամիցի ոք դատել ու առնուլ զշապիկս քո, թո՛ղ ի մա եւ զբաճկոն քո» [Մատթ., Ե 40]: «Եւ որ տարապարհակ վարիցէ զքեզ մղոն մի, ե՛րթ ընդ մա եւ երկուս» [Մատթ., Ե 41]:

«Յորժամ»-ով սկսվող ժամանակի պարագա երկրորդական նախադասություններին նույնպես կարող է հաջորդել հրամայականի բայածևով արտահայտված ստորոգումով գլխավոր նախադասություն. «Այլ յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս եւ զխեղս...»: [Ղուկ., ԺԴ 13]: «Այլ

դու յորժամ կայցես յաղօթս, մո՛ւտ ի սենեակ քո եւ փակեա՛ զդուրս քո եւ կա՛ց յաղօթս առ Հայր քո ի ծածուկ» [Մատթ., Զ 6]:

Պայմանահետևանքային իմաստը կարող է արտահայտվել և բարդ համադասական նախադասությամբ. «Եւ ասացից ցանձն իմ, անձն ունիս բազում բարութիւնս համբերեալ ամաց բազմաց. հանգի՛ր, կե՛ր, ա՛րբ և ուրախ լե՛ր» [Դուկ., ԺԲ 19]:

Ակնհայտ է, որ բուն հրամայականի իմաստագործառական առանձնահատկությունները պայմանավորված են ոչ թե նախադասության կառույցով, այլ նախադասության բովանդակությամբ: Ավելին, նրանք ձեռք են բերում ոճական արժեք՝ խոսքին հաղորդելով շատ նրբերանգներ: Այս առումով հետաքրքիր կիրառական բնութագիր ունեն հարադիր բայերը: «Յամենայն ժամ ուրախ լերուք: Անդադար աղօթս արարե՛ք» [Թ., Թես.Ա, Ե 16]: «Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն Տեառն» [Թ., Պետ. Ա, Բ 13]: «Աղօթս արարեք վասն մեր» [Թ., Եբր. ԺԳ 18]:

Նոր Կտակարանում գործածված են հրամայականի 116 հարադիր բայեր⁹, որոնց մեծ մասը ստեղծում է հատուկ տրամադրություն. անշուշտ, տարբերություն կա «աղօթս արարեք» և «աղթեցե՛ք» կառույցների մեջ: Հարադիր կառույցը կարծես հուշում է աղոթքի ստեղծագործ-արարչագործ բովանդակության մասին:

Գ. Հորոտռական հրամայականի բայածնեռի գործառություն:

Հորոտռական հրամայականն իմաստով համապատասխանում է արդի հայերենի բուն հարամայականին և ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների ապառնուն (գրեսցի՛ր = գրի՛ր, գրե՛ս, կգրե՛ս, պիտի գրե՛ս):

Իբրև հրամայական եղանակի բայեր՝ հորոտռական հրամայականի բայածներն արտահայտում են պատվիրան, հրաման, հանձնարարական, խնդրանք, թելադրանք, կոչ, հորդոր, ըստ որում հորդորները հիմնականում ունեն ուսուցողական բնույթ. «Զայս գիտասցի՛ր, զի մեկնեցան ի մենջ ամենեքեան որ էին յԱսիա»:¹⁰ [Թ, Տիմ., Բ, Ա 15]: («Այս բանն իմացի՛ր, որ մեզմից հեռացան բոլոր նրանք, որ Ասիայից էին»):

Նոր Կտակարանում հորոտռական հրամայականի բայածները ամենաշատը գործածվել են «Թղթերում» (133 բայած). սա պայմանավորված է

նյութի բովանդակությամբ: Նրանցում նկարագրվում է առաքյալների քարոզչական գործունեությունը՝ հիմնականում բարոյական մաքրություն, եղբայրասիրություն, զանազան խորհուրդներ, հրաժեշտի մաղթանքներ և ողջույններ: Ակնհայտ է այն համգամամբը, որ հորդորական հրամայականի բայաձևերը չունեն շեշտի ընդգծվածություն: Նրանք խոսքին հաղորդում են մեղմ և հաճելի նրբերանգ: «Ձբարուք աւանդն պահեսջիր ի ձեռն Հոգւոյն Սրբոյ ի մեզ քնակելոյ»: [Թ Տիմ. II, Ա 14] («Պահիր բարի ավանդը մեր մեջ քնակվող Սուրբ Հոգու միջոցով»):

Ամշուշտ կան մաս հորդորական հրամայականի բայաձևերով արտահայտված հրամայական մախաղասություններ, օրինակ՝ «Փութասջիր գալ առ իս վաղվաղակի» [Թ, Տիմ, II, Դ 9]:

Այսպիսով՝ հորդորական հրամայականի և բուն հրամայականի բայաձևերի իմաստային տիրույթը, ընդհանուր լինելով համդերձ, ունի այն առանձնահատկությունը, որ հորդորական հրամայականով բայաձևերի գործածությունը թելադրված է նյութի բովանդակությամբ և ստեղծում է որոշակի մեղմ ոճ, այսինքն՝ նրանց կիրառությունը դառնում է նպատակասլաց: Պատահակա՞ն է արդյոք Հիմ Կտակարանի գրքերից «Գիրք սաղմոսաց»-ում հորդորական հրամայականի բայաձևերի բացակայությունը: Դա պատճառաբանվում է նրանց բովանդակությամբ:

Սաղմոսները ամենատարբեր բովանդակության աղոթքներ և օրհներգություններ ներկայացնող չափածո ստեղծագործություններ են, որոնցում գործածված է բուն հրամայականի 615, արգելականի 77 բայաձև այն դեպքում, երբ չկա հորդորական հրամայականի ոչ մի գործածություն:

Այժմ տեսնենք հորդորական հրամայականի և ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերի փոխհարաբերությունները:

Եզակի թվի բայաձևերի իմաստագործառական նկարագիրն ավելի հստակ է, քան հոգնակի թվի բայաձևերինը, որովհետև հոգնակի թիվը ձևային նույնություն ունի ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերի հետ: Համեմատենք՝ «Եւ ահա յուսսջի եւ ծնցես որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս» [Դուկ., Ա 31]: «Եւ մա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ զարդարեալ, եւ անդ աատոաստեսջիք» [Դուկ., ԻԲ 12]:

Ընդգծված բայաձևերը գործածված են ստորադասական երկրորդ ապառնու բայաձևի հետ: «Յղասցիր»-ը հորդորական հրամայականի բայաձև է, որ արտահայտում է պայմանական ապառնու իմաստ, ինչը չենք կարող ասել «պատրաստեսցիք»-ի մասին, քանի որ այն ստորադասական երկրորդ ապառնու բայաձև է, որ նույնպես արտահայտում է պայմանական ապառնու իմաստ:

Հոգնակի թվի դեպքում նախադասության թե՛ բովանդակությունը, թե՛ կառույցը կարևորագույն նշանակություն են ստանում՝ որոշելու տվյալ, բայաձևի պատկանելիությունը ստորադասական եղանակի երկրորդ ապառնուն կամ հորդորական հրամայականին: «Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք, եռննչիցիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհեմ, այո՛, ասեմ ձեզ, յայնմանէ եռննչիցիք» [Ղուկ., ԺԲ 5]: Ընդգծված բայաձևերը ընկալվում են «վախեցե՞ք» (պիտի վախենաք) իմաստով: Նախադասության բովանդակությունը պայմանավորում է նրանց հորդորական հրամայականի բայաձև լինելը:

«Թղթեր»-ում օրինակ, հաճախադեպ են «գիտել» բայով ուղեկցվող նախադասությունները, որոնցում արտահայտվող հորդորը ընկալվում և թարգմանվում է արդի հայերենի բուն հրամայականով: Օրինակ՝ «... գիտասցիր, թէ անտի ծնանին կռիւք» [Թ., Տիմ. II, Բ 23]: «Գիտասցի՛ք», թէ իւրաքաչիւր ոք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ, եթէ ծառայես, եթէ ազատ» [Թ., Եբր., Զ 8]:

Հորդորական հրամայականի բայաձևերի իմաստային առանձնահատկությունների համար կարող է որոշակի դեր կատարել նաև նախադասության կառույցը: Այսպես՝ սովորաբար հրամայական եղանակի բայաձևերի հետ գործածելիս հորդորական հրամայականի բայաձևերը զգալի շեշտակիւր են և թարգմանվում են բուն հրամայականով. «... Արի՛, առ զմանուկդ եւ զնայր իւր եւ փախի՛ր յեգիպտոս. եւ անդ իհնօհո. յորժամ ասացից քեզ...» [Մատթ., Բ 13]: «Եւ ասէ զնոսա Յիսուս, եկա՛յք դուք առանձինն յանապատ տեղի եւ իանգիցիք սակաւ մի» [Մարկ., Զ 31]:

Ստորադասական եղանակի բայաձևերի հետ նրանք ստորադասական եղանակին բնորոշ իմաստներով են հանդես գալիս, օրինակ՝ «Իսկ եթէ նոցա ոչ լուիցէ ասասցի (կասես) յեկեղեցուք...» [Մատթ., ԺԸ 17]: «Այլ յորժամ

կոչիցիս, երթիջիր՝ բազմեսցիր (կզնաս, կնստես) ի յետին տեղւոջ» [Ղուկ., ԺՂ 10]:

Նախադասության կառույցն ունի որոշակի նշանակություն, սակայն դրանց առանձնացումը պայմանական է, ոչ թե օրինաչափություն, քանի որ ստորադասական եղանակի բայաձևերի շրջապատում հորդորականով բայաձևեր կարող է արտահայտել հրամայականի իմաստ, ինչպես տեսանք հրամայականի իմաստային տիրույթը քննելիս:

Նախադասությունների գերակշռող մասում տվյալ բայաձևի ընկալման և թարգմանության համար կարևոր դեր է կատարում անհատական գործոնը. նայած ինչպիսի շեշտադրմամբ են ընկալում տվյալ կառույցը. օրինակ՝ «Վասն որոյ, եղբարք, առաւել փութասցիք (ջանացեք, կջանաք, պիտի ջանաք) զի բարեացն գործովք հաստատում զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցեք» [Թ., Պետ. II, Ա 10]:

Այսպիսով, հորդորական հրամայականի բայաձևերի իմաստային առանձնահատկությունների համար կարևոր նշանակություն ունեն նախադասության բովանդակությունը, կառուցվածքը և անհատական ընկալման գործոնը:

Ամփոփում: Հին հայերենի հրամայական եղանակի բայաձևերը ձևային առումով կայուն բայաձևեր են: Նրանք ունեն իմաստագործառական հետաքրքիր բնութագիր, որ առավելագույնս արտահայտվում է Նոր Կտակարանում: Նրանց գլխավոր քերականական իմաստը խոսողի թելադրանքն է իբրև խնդրանք, պատվիրան, հորդոր, հանձնարարություն, կոչ, հրաման: Այս կամ այն իմաստը նրանք արտահայտում են գլխավորապես պայմանավորված ոչ թե նախադասության կառույցով, այլ՝ բովանդակությամբ:

Հրամայական եղանակի բայաձևերի գործառական շարահյուսական կադապարներ առանձնացնել չենք կարող. բացի պայմանահետևանքային որոշ կառույցներից:

Հատկապես աստվածաբանական գրականության մեջ հրամայական եղանակի բայաձևերն ունեն որոշակի արժեք. նրանք ստեղծում են ոճական դաշտ այս կամ այն իմաստային նրբերանգի համար:

Աղոթքներում բոլոր խնդրանքները, ավելին՝ ողորմություններն առ Աստված տրվում են հրամայական եղանակի բայաձևերով: Ի վկայումն մեր ասածի՝ հաստատում են նաև Հին Կտակարանի գրքերից «Գիրք Սաղմոսացում» հրամայական բայաձևերի կիրառությունները վերոհիշյալ իմաստներով: Նրանցում գործածված են միայն բուն և արգելական հրամայականի բայաձևեր: Հորդորական հրամայականի բացակայությունը պայմանավորված է նրանց բովանդակությամբ:

Նոր Կտակարանի գրքերում հրամայականի բայաձևերը գործածված են հետևյալ հաճախականությամբ. Սատթեսի Ավետարանում կիրառված է արգելական հրամայականի 26, բուն հրամայականի 190 և հորդորական հրամայականի 19 բայաձև, որից հրամայականի իմաստով՝ 9-ը, Սարկոսի Ավետարանում՝ արգելական հրամայականի 10, բուն հրամայականի 95 և հորդորական հրամայականի 10 բայաձև, որից 4-ը հրամայականի իմաստով, Ղուկասի Ավետարանում՝ արգելական հրամայականի 24, բուն հրամայականի 151 և հորդորական հրամայականի 13 բայաձև, որից 5-ը հրամայականի իմաստով, Հովհաննեսի Ավետարանում՝ արգելական հրամայականի 9-ը բայաձև, բուն հրամայականի 85 և հորդորական հրամայականի 14 բայաձև, որից 5-ը հորդորականի իմաստով, « Գործք առաքելոցում»՝ արգելական հրամայականի 5, բուն հրամայականի 87 և հորդորական հրամայականի 4 բայաձև: Թղթերում՝ արգելական հրամայականի 51, բուն հրամայականի 291 և հորդորական հրամայականի 133 բայաձև, որից 96-ը հրամայականի իմաստով, «Յայտնութիւն» - ում՝ արգելական հրամայականի 4, բուն հրամայականի 49 բայաձև, հորդորական հրամայականի ոչ մի գործածություն չկա: «Գիրք Սաղմոսացում» գործածված է արգելական հրամայականի 77, բուն հրամայականի 615 և հորդորական հրամայականի ոչ մի բայաձև:

Վիճակագրական տվյալները ևս ապացուցում են, որ Ավետարանիչները միևնույն Սարդ-Աստոն կյանքը, գործունեությունը ներկայացնելիս դրսևորում են իրենց անհատականությունը և՛ աստվածաբանական, և՛ լեզվաարտահայտչական առումով:

Հատկապես աստվածաբանական գրականության մեջ հրամայական եղանակի բայաձևերն ունեն որոշակի արժեք. նրանք ստեղծում են ոճական

դաշտ այս կամ այն իմաստային նրբերանգի համար: Հետաքրքիր և դժվար է առանձնապես հորդորական հրամայականի բայաձևերի իմաստային տիրույթի քննությունը: Դժվարության գլխավոր պատճառներից մեկը հոգնակի թվի բայաձևերի և ստորադասական երկրորդ ապառնու բայաձևերի քերականական համանուն լինելու հանգամանքն է, մյուս կողմից հորդորական հրամայականով կառույցների իմաստային նրբերանգները պայմանավորվում են նախադասության բովանդակությամբ:

Չնայած իր անվանումին՝ հրամայական եղանակը Նոր Կտակարանում «աղոթքի» եղանակ է: Մեր խոսքն ավարտում ենք Հիսուս Քրիստոսի պատգամով. «Առէ՛ք զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարու՛ք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց» [Մատթ., ԺԱ 29]:

Ծանոթագրություններ

1. Վերջավորությունների ծագման մասին մանրամասն տես՝

ա) Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե, 1987թ. էջ 102,378,

գ) Г.Б. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван 1982, էջ 159,163-165, 192, 228,

դ) Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների հ IV, Ա գիրք, Ե., 1959թ., էջ 360-362,

դ) Ս.Ղ. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ Ա, Ե., 1961, էջ 358,

ե) Թ. Ղարազյուլյան, Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը, Ե., 1961, էջ 108-114:

2. Հմմտ. Եզ. ծ. վրդ. Պետրոսյան, Ներածություն Նոր Կտակարանի, Մայր աթոռ Ս. Էջմիածին, 1996թ., էջ 50-52:

3. Տես նշվ. աշխ., էջ 42-43;

4. Տես նշվ. աշխ., էջ 30-31:

5. Տես նշվ. աշխ., էջ 44-53:

6. Տես նշվ. աշխ., էջ 53:

7. Տես նշվ. աշխ., էջ 132-133:

8. Տես նշվ. աշխ., էջ 73-132:

9. Բոլոր բայերը ստուգվել են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (հ. Ա- Բ, Երևան, 1979թ.) բառարանով:

10. Նոր Կտակարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Ի Վիեննա, Ի վաճառք պաշտպան Ս. Աստուածածնի, 1864: